ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

19 մարտի 2013թ. N-Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԿՑԱԿԱՌՈՒՅՑՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 34-րդ գլխի կանոններով, Երևան քաղաքի ավագանու 2012 թվականի դեկտեմբերի 25-ի «Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքն օգտագործման տրամադրելու և օտարման 2013 թվականի ծրագրի վերաբերյալ» հ.580-Ն որոշմամբ՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Թույլատրել Երևանի քաղաքապետին Երևան համայնքի սեփականություն համարվող (անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 14.12.2011թ.հ. 2829369 վկայական) Ա.Տիգրանյան փողոցի հ.38 հասցեում գտնվող բնակելի մասնաշենքի կցակառույցը նվիրել կից հավելվածում նշված քաղաքացիներին՝ իրենց կողմից օգտագործվող մակերեսներին համապատասխան:

2. Սահմանել, որ Ա.Տիգրանյան փողոցի հ.38 հասցեում գտնվող բնակելի մասնաշենքի (կցակառույցի) նվիրաբերվող մակերեսները ենթակա են վերջնական ճշտման պետական լիազոր մարմնի կողմից տրված համապատասխան որակավորման վկայական ունեցող անձի կողմից:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Հավելված
Երևան քաղաքի ավագանու
2013 թվականի մարտի 19-ի
N---Ա որոշման

Ց Ո Ւ Ց Ա Կ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ Ա.ՏԻԳՐԱՆՅԱՆ ՓՈՂՈՑԻ Հ.38 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՄԱՍՆԱՇԵՆՔԸ (ԿՑԱԿԱՌՈՒՅՑԸ) ՆՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հ/Հ	Շինության Համար	Սեփականատերեր	Վկայականի համարը
1	55	Մանվել Ղազարյան Արմինե Միքայելյան	21.06.2006թ. h.2090476

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԿՑԱԿԱՌՈՒՅՑՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի Ա.Տիգրանյան փողոցի հ.38 շենքին կից «Տաթև ԿՔՏ» ՍՊԸ-ի կողմից իրականացվել է կցակառույցի շինարարություն՝ շենքի սեփականատերերի միջոցների հաշվին: Երևանի քաղաքապետի 2007 թվականի նոյեմբերի 29-ի հ.5184-Ա որոշմամբ թողարկվել է նշված հասցեում գտնվող կցակառույցի զբաղեցրած հողամասի հ.7688-2007 գլխավոր հատակագիծը և կցակառույցի նկատմամբ կատարվել է իրավունքի պետական գրանցում:

Ա.Տիգրանյան փողոցի հ.38 շենքին կից կցակառույցն իրականացվել է շենքի սեփականատերերի միջոցների հաշվին, փաստացի օգտագործվում և տիրապետվում է նրանց կողմից

«Երևան համայքնի սեփականությունը համարվող կցակառույցն անհատույց օտարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման ընդունումը պայմանավորված է հարցի կարգավորման անհրաժեշտությամբ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐՎՈՂ ԿՑԱԿԱՌՈՒՅՑՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան քաղաքի սեփականությունը համարվող կցակառույցն անհատույց օտարելու մասին» որոշման ընդունման առնչությամբ առաջանում է «Երևան համայնքի սեփականություն հանդիսացող բնակարանն անհատույց օտարելու մասին» Երևանի քաղաքապետի որոշում կայացնելու անհրաժեշտություն։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐՎՈՂ ԿՑԱԿԱՌՈՒՅՑՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան քաղաքի սեփականությունը համարվող կցակառույցն անհատույց օտարելու մասին» որոշման ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չեն սպասվում։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ